Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ
a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

65/4161/ 10 ապրիլի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224

Ա

## Առանց գլխավոր դերակատարների

ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի ներկայացուցիչները լրատվամիջոցներին կիսապաշտոնապես տեղեկացրին, որ «այս փուլում» նրանք չեն մասնակցելու հեռուստատեսային բանավեճերին ոչ իրար, ոչ էլ խորհրդարանական ընտրություններին մասնակցող այլ քաղաքական ուժերի հետ: Թե որքան է տեւելու «այս փուլը»՝ առայժմ հայտնի չէ: Չեմ կարող ասել նաեւ, թե ինչով է պայմանավորված նման մարտավարությունը. թվում է, թե երկու թիմերում էլ կան ճարտար լեզու ունեցող մարդիկ՝ Արտաշես Գեղամյան, Խոսրով Հարությունյան, Գուրգեն Արսենյան, Հմայակ Հովհաննիսյան: Ճիշտ է, նրանց մասնակցությամբ բանավեճերն ավելի շուտ կլինեն մենախոսությունների շարքեր, որովհետեւ շատ դժվար կլինի ընդհատել այդ գործիչների մտքերի հոսքը, բայց որ նրանք ցանկացած ընդդիմադիրի «խոսքի տակ չեն մնա»՝ դա ակնհայտ է: Օրինակ՝ երբ ինձ են առաջարկում մասնակցել որեւէ բանավեճի, ես հրաժարվում եմ, որովհետեւ գիտեմ, որ պարտվելու եմ, որովհետեւ լեզվակռվում որեւէ մեկին ջախջախելը, «ծնկի բերելը» եւ անարգանքի սյունին գամելը անլուրջ, մանկապարտեզային զբաղմունք եմ համարում: Բայց քաղաքական գործիչները պարտավոր են, բնականաբար, մտնել այդպիսի բանավեճերի մեջ՝ մանավանդ նախընտրական շրջանում:

Այսպիսով, իրենց կազմերում ունենալով կարկառուն բանախոսներ, իշխող կոալիցիայի անդամ երկու կուսակցությունները առայժմ հրաժարվում են դեբատներից: Նրանց բացակայությամբ բանավեճերն այնքան էլ հետաքրքիր չեն, որովհետեւ մնացածները հանդես են գալիս մեղադրողի դերում, իսկ արդարացողը չկա: Իհարկե, կարող են լինել նաեւ այլ կոնֆիգուրացիաներ. ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն եւ «Ժառանգությունը» կարող են վիճել, թե ով է նրանցից ավելի ընդդիմադիր եւ ավելի «վճռական տրամադրված», բայց նրանց միջեւ խորը հակասություններ չեն կարող լինել, որովհետեւ նրանք պետք է արձանագրեն, որ վիճակը վատ է, արտագաղթ է, կոռուպցիա է, մենաշնորհներ են եւ այլն: Եթե այս հարցերում ոչ ոք չի հակադարձում, բանավեճ, ըստ էության, չկա:

Ճիշտ է, երեկ ես «Ա1+»-ով վարում էի մի բանավեճ, որը, իմ կարծիքով, շատ յուրահատուկ էր՝ մասնակցում էին ՀԱԿ-ի եւ ենթադրյալ աութսայդերներից մեկի՝ ՀԴԿ-ի ներկայացուցիչները: Կոնգրեսի անդամն ասում էր, որ իրավիճակը վատ է, իսկ դեմոկրատն էլ պնդում էր, որ՝ այո, վատ է, բայց դրա մեղավորը ոչ այնքան ներկայիս իշխանությունն է, որքան ՀՀՇ-ն, որը քանդեց գյոզալական սովետական երկիրը, փակեց գործարանները, ամեն ինչ թալանեց եւ, ղեկավարվելով արեւմտյան կասկածելի դեղատոմսերով, Հայաստան ներմուծեց վայրի լիբերալիզմը: Պարզապես հիշեցնեմ, որ 1998 թվականից մինչեւ 2012 թվականը բավականին ժամանակահատված կար՝ այդ ամենը շտկելու, եւ ՀՀՇ-ի սխալների գնահատականներն այսօր ավելի շուտ պատմաբանների, ոչ թե քաղաքական գործիչների խնդիրն են:

Այդ բանավեճն ինձ համար, համենայնդեպս, ինֆորմատիվ էր. ես հասկացա, թե ինչու է ՀԴԿ-ն մասնակցում ընտրություններին:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Կամ լավ, կամ ոչինչ»



Ապրիլի սկզբին «Առավոտը» պլանավորում էր հարցազրույց վերցնել Երեւանի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Սուրեն Զոլյանից: Առիթները երկուսն էին. նախ՝ լրանում է նրա պաշտոնավարման 15 տարին: Երկրորդ՝ վերջերս լույս է տեսել ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ համալսարանի համատեղ ժողովածուն՝ Higher Linguistic Edication from the Perspective of Reforms, որի հիմքում էին Լեզվաբանական համալսարանում տեղի ունեցած միջազգային համաժողովի նյութերը, ու որն արդեն արժանացել էր մասնագետների բարձր գնահատականների: Սակայն անցած շաբաթ առաջացավ հարցազրույցի ավելի հրատապ առիթ: ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանով Սուրեն Զոլյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժ՝ այն բանի համար, որ ռեկտորը առանց նախարարության թույլտվության բացակայել է Հայաստանից: «Առավոտի» խնդրանքով մեկնաբանելով այդ հրամանը՝ պարոն Զոլյանն ասաց. «Առհասարակ, ես ղեկավարվում եմ մի սկզբունքով. նախարարի մասին կամ լավ, կամ ոչինչ՝ հատկապես այն դեպքում, երբ նախարարը ոչնչություն է: Իսկ ինչքանով դա կարող է վերաբերվել գործող նախարարին, այդ մասին թույլ տվեք չմանրամասնել»:

ՍՈՒՐԵՆ ԶՈԼՅԱՆԻ պատասխանի շարունակությունը՝ 2-րդ էջում:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Ժառանգությունը» երրորդն է

«Առավոտի» հետ զրույցում գնահատելով այս պահի դրությամբ ընտրական պայքարի մեջ մտած 9 քաղաքական ուժերի թվում մասնավորապես «Ժառանգության» հաջողության հասնելու հնարավորությունը՝ քաղաքական տեխնոլոգ Կարեն Քոչարյանն ասաց. «Անկեղծորեն ասեմ, անգամ այս պահի դրությամբ «Ժառանգությունը», կարծում եմ, իր հաղթանակի հասնելու շանսով երրորդն է: Նա առայժմ զիջում է միայն ՀՀԿ-ին ու ԲՀԿ-ին, ու համոզված եմ, որ ՀԱԿ-ից էլ է առաջ, ՀՅԴ-ից էլ: Դե, իսկ ՕԵԿ-ից... ՕԵԿ-ի մասին մի անգամ արդեն ասել եմ՝ կամ լավը, կամ ոչինչ, իսկ ես գերադասում եմ ոչինչը»:

Կարդացեք էջ 3:

### ԲՀԿ ցուցակում տեղ չգտածը ելույթում գովեց ՀՅԴ ծրագիրը

ԲՀԿ խմբակցության պատգամավոր Վարդան Բոստանջյանը երեկ հյուր էր ՀՅԴ-ի նախընտրական ծրագրի ներկայացմանը եւ սկսեց իր խոսքն այսպես. «Գերի չդառնամ իմ անձնական համակրանքներին եւ այնքան չգովաբանեմ, որ հուզվեն»: Ասաց, որ բարձր մակարդակի ծրագիր է, ամեն ինչ շատ ճիշտ է գրված եւ այլն: Այսպիսի կտրուկ համակրանքը ՀՅԴ-ի նկատմամբ բացատրեց նրանով, որ այդ համակրանքը միշտ է ունեցել: Իսկ «Առավոտի» հարցին՝ այդ դեպքում ինչո՞ւ էիք ԲՀԿ մտել, պատասխանեց՝ այդպես էր պետք:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

### Եթե հիմնավորի, որ բնակարանի կարիք ունի, ՀՅԴ-ն կտա

ՀՅԴ-ի նախընտրական ծրագրում մի կետ կա. 5 եւ ավելի երեխա ունեցողներին խոստանում են հատկացնել անվճար բնակարան: Aravot.am-ի հետ զրույցում ՀՅԴ պատգամավոր Արծվիկ Մինասյանը մեր դիտարկմանը՝ փաստորեն ուզում եք օգնած լինել նաեւ Սամվել Ալեքսանյանի՞ն՝ պատասխանեց. «Եթե Սամվել Ալեքսանյանն ունի բնակարանի կարիք՝ իհարկե կտանք, բայց չափորոշիչ կա՝ Սամվել Ալեքսանյանը պետք է հիմնավորի, որ ինքը բնակարանի կարիք ունի: Թե չէ՝ դղյակի սեփականատիրոջը հո չե՞նք տա»: Այն ենթադրությանը, որ հնարավոր է, թե Սամվել Ալեքսանյանը փաստաթղթերով գուցե տուն չունենա՝ պարոն Մինասյանը պատասխանեց, որ գոյություն ունի իրականություն, եւ իրենք հաշվի են առնելու ոչ թե փաստաթղթերը, այլ իրականությունը:

ՀՅԴ-ի այլ խոստումների մասին՝ էջ 4-ում:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ուսանողական համերգ

Այսօր, ժամը 13:50-ին, «Մոսկվա» կինոթատրոնի մոտ տեղի կունենա ուսանողական համերգ՝ նվիրված գարնանը:

### Եղանակ

Երեւան +5 +20, Շիրակ -3 +11, Կոտայք -3 +11, Գեղարքունիք -3 +11, Լոռի 0 +19, Տավուշ +2 +21, Արագածոտն լեռներ -3 +11, Արագածոտն նախալեռն. +3 +19, Արարատ +4 +20, Արմավիր +4 +20, Վայոց Ձոր լեռներ -3 +11, Վայոց Ձոր նախալեռն. -4 +20, Սյունիքի հովիտներ +5 +23, Սյունիքի նախալեռներ +2 +17, Արցախ +4 +21

## «Նույն հաջողությամբ պարոն Աշոտյանը կարող էր ինձ աքսորել Լուսին»

Անդրադառնալով ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի՝ իրեն խիստ նկատողություն տալու հրամանին՝ Երեւանի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զոլյանն «Առավոտին» ասաց. «Չգիտեմ, թե ինչ նմանատիպ, աչքի ընկնող նվաճումներ ունի Տիգրան Սարգսյանի կառավարությունը, սակայն այդ հրամանի շնորհիվ այն հաստատ կարող է հավակնել Գինեսի գրքում հայտնվելուն: Իսկապես՝ ինչ մտքի տեր պետք է լինել, որպեսզի Եվրախորհրդի Նախարարների խորհրդի կողմից ընտրված Փոքրամասնությունների կամ տարածաշրջանային լեզուների եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտեի անդամին խիստ նկատողություն հայտարարել Կոմիտեի պլենար նիստին մասնակցելու համար: Եվ դա այն դեպքում, երբ համապատասխան Խարտիայում հստակ նշված է, որ կառավարությունը չպիտի միջամտի փորձագետի գործունեությանը: Պարզից էլ պարզ է. դատարանը անվավեր կճանաչի այս անհեթեթ հրամանը, ուստի ես որեւէ անհանգստանալու բան չունեմ: Պարոն Աշոտյանը ակնհայտորեն գերազանցել է իր լիազորությունները, նույն հաջողությամբ նա կարող էր հրամայել ինձ գլխատել կամ աքսորել Լուսին: Սակայն այստեղ ես նաեւ դրական բան եմ տեսնում. դատաքննության ընթացքում կիրապարակվի այս որոշմանը նախորդած նամակագրությունը եւ ակներեւ կդառնա պարոն Աշոտյանի մտավոր եւ բարոյական մակարդակը, ինչից թող հետեւություններ անեն նրա գործընկերները կառավարությունում եւ կուսակցությունում: Դիմելու ենք նաեւ վարչապետին, որպեսզի նա նախ՝ վերացնի նշված հրամանը եւ որոշի պարոն Աշոտյանի հետագա պաշտոնավարման նպատակահարմարությունը: Թե չէ՝ ժողովրդի լեզվով ասած՝ հիվանդը չի ամաչում, հիվանդի տերն է ամաչում»:

Սեփ լր.

Հ. Գ. Սուրեն Զոլյանի հետ ընդարձակ հարցազրույցը կիրապարակենք հաջորդիվ: Պատրաստ ենք հրապարակել պարոն Աշոտյանի պատասխանը:

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է

«Հարյուր հարց, հարյուր պատասխան»

քննարկումների շարքի հերթական միջոցառմանը:

Այս անգամ հյուրն է Հայաստանի առաջին արտգործնախարար

Րաֆֆի Հովհաննիսյանը

Քննարկումը կվարի «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արամ Աբրահամյանը

Միջոցառումը տեղի կունենա ապրիլի 10-ին, ժամը 14:00-ին,

«Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119:

Տեղերը սահմանափակ են:

Ձեր հարցերը կարող եք նախօրոք ուղղել

պրն Հովհաննիսյանին «Սիվիլիթասի» կայքում:

# Գյումրու օդանավակայանը՝ էժան ավիափոխադրումների կենտրոն

«Շիրակ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Արման Սահակյանի կարծիքով՝ այս նպատակին հասնելու համար անպայման պետք է բանակցել կառավարության հետ:




Հանրապետության 10 խոշոր հարկատուներից մեկը՝ Արման Սահակյանը, ով մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածություն է առաջադրել Գյումրիից, օրերս հրատարակել էր այս քաղաքի զարգացման հեռանկարների մասին իր հեղինակած գիրքը, որը կոչվում է «Գյումրու վերելքի ուղին»: Գրքում ներկայացնելով վիճակագրական տվյալներ, ըստ որոնց՝ Շիրակի մարզում գրանցվել է աղքատության ու արտագաղթի ամենաբարձր մակարդակը, հեղինակը արտերկրյա որոշ քաղաքների՝ Գերմանիայի Էսսենի, Բուլղարիայի Ռուսսեի, Իռլանդիայի Կիլկենիի եւ այլնի օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես կարել է փրկել կործանվող Գյումրին, փոխել քաղաքում տիրող ընկճվածության ու հուսալքության մթնոլորտը: «Գյումրին ոչ միակն է, ոչ առաջինը եւ ոչ էլ վերջինը, որ այս կարգի խնդիրներ ունի. փլուզված տնտեսություն արեւելաեվրոպական բոլոր քաղաքներում էլ կա, ավելի խելացի է հետեւել նրանց փորձին, ում մոտ ստացվել է, քան հորինել ինչ-որ ճանապարհներ, ստեղծագործել ու միջոցներ վատնել, կան հաջող օրինակներ, որոնց փորձը կարելի է կիրառել՝ իհարկե հաշվի առնելով Գյումրու առանձնահատկությունները»,- ասում է մեր զրուցակիցը: Քանի որ հեղինակը շեշտը դրել էր Գյումրիում տեքստիլ արդյունաբերության զարգացման, ներդրողների համար արտոնյալ պայմաններ ստեղծելու վրա, մենք նրանից հետաքրքրվեցինք՝ ինչպե՞ս է պատկերացնում ներդրողների մուտքը Գյումրի, չէ՞ որ այն չափազանց ռիսկային տեղանք է, ներդրողների համար ոչ այնքան գրավիչ, նույնիսկ «Գյումրու մասին օրենքը», որը նույնպես արտոնյալ պայմաններ էր խոստանում ներդրողներին, որեւէ կերպ չօգնեց քաղաքին, եւ ի վերջո՝ Արման Սահակյանը այս նպատակի համար կօգտագործի՞ իր անձնական կապերը: «Իհարկե՝ կօգտագործեմ, բայց դա բավարար չէ. գործարարին բերելու համար պետք է ստեղծել արտոնյալ պայմաններ: Խոսում ենք տեքստիլ արդյունաբերությունից. Արեւելյան Եվրոպայում կան տասնյակ քաղաքներ, որտեղ տեքստիլ արտադրության ազատ տնտեսական գոտիներ են ստեղծվել. ոչ մի գործարար չի գա Հայաստան, Գյումրի ավելի վատ պայմաններով, քան կարող է Բուլղարիայում կամ Ռումինիայում արտադրել: Այսինքն՝ եթե չունենք պայմաններ, գործարարությունն ու բարեգործությունը տարբեր բաներ են, մեզ մոտ ոչ մի արեւմտյան ձեռնարկություն արտադրություն չի դնի: Բիզնեսը միշտ գնում է շահի ետեւից, եւ պետք է ապահովել հստակ առավելություններ: Արտոնյալ պայմաններ ասելով՝ ես հասկանում եմ ազատ տնտեսական գոտու ստեղծում Գյումրիում, որը կլինի Հայաստանում թվով 3-րդը»:

Ըստ մեր զրուցակցի՝ իրականում շատ բարդ ու դժվար իրագործելի է Գյումրու զարգացումը, սակայն ռազմավարության հստակ նպատակ ունենալու ու համախմբվելու դեպքում այն միանշանակ հնարավոր է: «Գյումրիում երկու խնդիր գումարվել են իրար. երկրաշարժը եւ Խորհրդային Միության փլուզումը, Գյումրու սոցիալ-տնտեսական խնդիրները վերջին հաշվով կապված են ոչ թե երկրաշարժի, այլ ԽՍՀՄ պլանային տնտեսությունից ազատ շուկայի անցման հետ: Ես կարծում եմ, որ Հայաստանի իշխանությունները բնակարանաշինության խնդիրը լուծել են Գյումրիում, չնայած վերջնական չէ, եւ արդեն գալիս է սոցիալ-տնտեսական խնդիրների մասին մտածելու ժամանակը: Թե Արեւելյան Եվրոպայում, թե նախկին Խորհրդային Միության տարածքում շատ-շատ քաղաքներ պլանային տնտեսության պայմաններում ունեին շատ մեծ ձեռնարկություններ, որոնք Խորհրդային Միության փլուզումից ազատ շուկայի անցնելու պարագայում փակվեցին: Հարյուրավոր հաջող ու անհաջող օրինակներ կան, որ քաղաքի տնտեսական ստրուկտուրան փոխվել է, քաղաքը եղել է արդյունաբերական՝ դարձել է զբոսաշրջության կամ կրթության եւ գիտության կենտրոն: Հիմա մեր խնդիրն է հասկանալ, թե ինչպիսին պետք է լինի Գյումրին 10 կամ 20 տարի հետո, պարզ է, որ հաստոցաշինական մեծ գործարանները չեն աշխատի, բայց ամեն ինչի պիտի հասնենք վերաիմաստավորելով»,- ասում է պարոն Սահակյանը:

Նա իր գրքում խոսել էր նաեւ Գյումրու օդակայանը ցածրարժեք ավիափոխադրումների կենտրոն դարձնելու մասին: Մենք նրան հարցրինք՝ մի՞թե մինչեւ օրս Գյումրու օդակայանի հնարավորությունները ճիշտ չեն օգտագործվել: «Ես կոնկրետ թվեր եմ մեջբերել, 2010թ.-ի համեմատ 2011-ին Գյումրու ուղեւորափոխադրումները աճել են 1,7 անգամ, այսինքն՝ մոտ 70 հազար ուղեւոր է եղել, բայց իմ կարծիքով՝ բավականին քիչ է, կարելի է ձգտել հասնելու կառավարության հետ այն պայմանին, որ Գյումրիի օդանավակայանը դառնա էժան ավիափոխադրումների կենտրոն Հայաստանում՝ ապահովելով 200-300 հազար ուղեւորների ուղեւորափոխադրումներ, ինչը, բնականաբար, մեծ շարժ կբերի Գյումրի: Օդանավակայանը տված է կոնսեսիոն կառավարման, այն նախատեսված է որպես ռեզերվային, բայց քանի որ շուկան գնալով ավելի լիբերալ է դառնում տարիների ընթացքում, ճիշտ կարելի է օգտագործել»:

Մեր զրուցակիցը իր գրքում նաեւ կարծիք էր հայտնել, որ Գյումրիում բոլոր նախադրյալները կան տնտեսապես զարգացած քաղաք դառնալու համար: Մենք նրանից ճշտեցինքն, թե գյումրեցու թասիբից բացի՝ էլ ի՞նչ նախադրյալներ են մնացել ավերակ քաղաքում: «Նախադրյալները հենց գյումրեցիներն են, էլ ոչ մի ուրիշ նախադրյալներ չկան, փառք Աստծո, Գյումրիում տրադիցիոն կրթության մակարդակը միշտ բարձր է եղել, ամեն ինչ կառուցվում է մարդու շուրջ, Գյումրին ունի քաղաքային բնակչություն, որը սիրում է կրթվել, սովորել, մանավանդ՝ տեխնիկական գիտություններում, կարծում եմ՝ ամենամեծ ներուժը մարդն է, սարերն ու ձորերը չեն»,- ասում է Արման Սահակյանը: Ըստ մեր զրուցակցի՝ Գյումրին կարող է եկամուտներ բերել նաեւ տուրիզմի զարգացումը, քանի որ Գյումրին Հայաստանի այն բացառիկ վայրն է, որը քաղաքի կենտրոնում ունի հին քաղաք՝ ինքնատիպ ճարտարապետությամբ:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# Բոստանջյանի պատճառով կվատանա՞ն ՀՅԴ-ԲՀԿ հարաբերությունները

«Վարդան Բոստանջյանը կարողանում է գտնել ճշմարտությունը՝ այս կամ այն մոտեցումների: Հիմա տվյալ դեպքում Բոստանջյանը գտավ, որ Դաշնակցության առաջ քաշած մոտեցումները համահունչ են իր պատկերացումներին, որոնց մասին, ի դեպ, նա բազմիցս պառլամենտի դահլիճում արտահայտել է: Միշտ էլ եղել է համակրանքը: Ես շատ ուրախ եմ, որ պարոն Բոստանջյանն այդ մասին հրապարակավ ասաց: Նախընտրական այս օրով նա իր ջերմ աջակցությունը հայտնեց Դաշնակցությանը»,- Aravot.am-ի հետ զրույցում ՀՅԴ պատգամավոր Արծվիկ Մինասյանն այսպես պատասխանեց մեր հարցին, թե Վարդան Բոստանջյանի ելույթն անակնկալ չէ՞ր ձեզ համար: Մենք նաեւ փորձեցինք ճշտել՝ հնարավո՞ր է դրանից ԲՀԿ-ի հետ ձեր հարաբերությունները վատանան՝ նա պատասխանեց. «Մենք որեւէ նման ցանկություն կամ տրամադրություն չունենք որեւէ մեկի հետ մեր հարաբերությունը լավացնելու կամ վատացնելու: Մեր գլխավոր խնդիրը հասարակությանը համախմբելն ու մոբիլիզացնելն է, եւ եթե Բոստանջյանի նման հեղինակավոր մարդը դրական է արտահայտվում, մենք վստահ ենք, որ դրան կհետեւեն նաեւ շատերը»:

Պատրա՞ստ է ՀՅԴ-ն ընդունել Վարդան Բոստանջյանին իր շարքերում, պարոն Մինասյանը պատասխանեց՝ պարտադիր չէ, որ նա անպայման դաշնակցական լինի. «Մեծ ձեռքբերումներից մեկը մեր համակիրների մեծ զանգվածն է, այսինքն՝ Դաշնակցությունն ունի ընդամենը 6-7 հազարին մոտ անդամ, բայց ստանում է 180 հազար քաղաքացիների աջակցություն: Սա նշանակում է, որ մեր ուժը մեր համակիրների մեջ է: Կարեւորը, որ նա կիսի մեր գաղափարախոսությունը, ընդունի այն եւ պատրաստ լինի այդ գաղափարախոսության, ծրագրերի ներքո ինքն էլ մասնակցություն ունենալ գործերի կատարմանը»:

Հ. ՁԵԲԵՁՅԱՆ

Առավոտ aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 10.04.2012

# «Ժառանգությունն» ազդարարեց իր քարոզարշավի մեկնարկը

## Շատ ինքնատիպ այդ միջոցառումն ընթացավ «Գալիս ենք» կարգախոսի ներքո



Այսօր «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցություններն ազդարարեցին իրենց համատեղ նախընտրական քարոզարշավի մեկնարկը, որը շատ ինքնատիպ էր ու բացառիկ իր ներկայացման ձեւով: Միջոցառումը, որի ընթացքում ներկայացվեցին համամասնական ցուցակում ընդգրկված ոչ միայն մեր հասարակությանն արդեն քաջ ծանոթ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորներն ու «ազատ դեմոկրատ» քաղաքական գործիչները, այլեւ ցուցակում նոր դեմքեր համարվող հասարակական սեկտորի ներկայացուցիչ թեկնածուները, ընթանում էր «Գալիս ենք» կարգախոսի ներքո: Միջոցառման բացման խոսքում «Ժառանգության» նախընտրական շտաբի պետ, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչիկ Քոքոբելյանն ասաց, թե իրենք քարոզարշավը սկսում են Հանրապետության հրապարակից եւ ավարտելու են Ազատության հրապարակում հրավիրվելիք մեծ հանրահավաքով: ՀՀ օրհներգի կենդանի կատարումից հետո Քոքոբելյանը բեմ հրավիրեց, իր ձեւակերպմամբ՝ «Նոր Հայաստանի առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանին», որին միջոցառման ներկաները դիմավորեցին երկար ծափողջույններով եւ «Րաֆֆի» վանկարկումներով: Վերջինս ասաց, թե իր գլխավորած կուսակցության եւ «Ազատ դեմոկրատների» թիմը կրողն է այն արժեքների, որոնք հիմնված են «իրավունքի, Սահմանադրության եւ օրենքների, բայց ոչ երբեք մուրացկանության, ողորմության եւ կեղծ բարեգործության վրա»:

Րաֆֆի Հովհաննիսյանը խոսեց քննադատության առարկա դարձած նախընտրական ցուցակի մասին. «Մեկ անգամ եւ ընդմիշտ պատասխանեմ չարախոսներին, ճաք փնտրողներին, կեղծ հայրենասերներին եւ ստորին վերլուծաբաններին, որովհետեւ մենք գալիս ենք եւ գործ ունենք անելու, եւ այդ գործը անելու ենք միասին եւ ի հեճուկս նրանց: Ես բոլորին ներում եմ, բոլորին անխտիր: Հիմիկվանից ներում եմ իրենց սխալ խոսքերի, արտահայտությունների համար: Բայց թող իմանան, որ «Ժառանգության» ցուցակը հայ ժողովրդի, հայաստանցու թիմն է, մի ամբողջություն է, մի հավաքականություն, ՀՀ քաղաքացուն պատկանող թիմ, նրա առջեւ հաշվետու եւ պատասխանատու: «Ժառանգությունից», «Ազատ դեմոկրատներից», շարքային քաղաքացիներից, մտավորականներից, երիտասարդներից բաղկացած թիմ է, որը վաղը-մյուս օրը ոչ միայն կազմելու է մեծամասնություն Ազգային ժողովում, այլ նաեւ մասնակցելու է գործադիր իշխանության՝ կառավարության, ապա եւ Նախագահության ու դատական իշխանության ձեւավորմանը: Ով սրան չի հավատում այսօ՛ր, կհավատա 30 օր անց»: «Ժառանգության» առաջնորդը նաեւ վստահեցրեց, որ եւ մեծամասնական, եւ համամասնական ցուցակներով իր գլխավորած թիմը առաջիկա ընտրություններում լինելու է առաջատարը, ու նաեւ հավելեց, թե «Ժառանգության» ցուցակում չկա մեկը, ում հետ ինքը ժամանակին չի բանավիճել, չի բանակցել կամ խնդիր չի ունեցել՝ որպես քաղաքացի կամ մարդ, կամ նախկին պաշտոնյա. «Բայց «Ժառանգության», «Ազատ դեմոկրատների», ՀՀ քաղաքացիների այս ցուցակի մեջ են մարդիկ, ովքեր կամք եւ ուժ ունեն ներելու եւ ներվելու, հասկանալու իրենց սխալները, գիտակցելու ազգային շահը, ու ազատ քաղաքացին է, որի հետ «Ժառանգությունը» գնում է դեպի հաղթանակ»:

Սրահում տեղադրված մեծ էկրանին միջոցառման ներկաների համար ցուցադրվեցին համամասնական ցուցակում ընդգրկված թեկնածուների՝ դարձյալ «Մենք գալիս ենք» կարգախոսի ներքո հնչող կարճ ուղերձները:

Հետո նույնքան կարճ ելույթներով հանդես եկան իրենք՝ «համամասնականի» թեկնածուները, որոնք ներկայացրին ԱԺ-ում իրենց անելիքների շրջանակը: Մասնավորապես «Ազատ դեմոկրատների» փոխնախագահ Անուշ Սեդրակյանը հայտարարեց. «Մենք բազմիցս շփոթել ենք մեր երկրի ազատությունը ապահովության հետ, եւ արդյունքում կորցրել ենք եւ ազատությունը, եւ ապահովությունը: Այժմ ժամանակն է հասկանալու, որ մենք կարող ենք ապահով ապրել միմիայն ազատ երկրում: Մենք պահանջատերն ենք մեր ազատ եւ արդար Հայրենիքի, մենք պահանջատերն ենք մեր քաղաքացիական իրավունքի, մեր երիտասարդության ապագայի, մենք պահանջատերն ենք սովորական մարդկային երջանկության»:

«Միշտ էլ եկել ու այսօր էլ գալիս է քաղբանտարկյալ եւ ամբողջական քաղաքացի Կարապետ Ռուբինյանը»,- վերջինիս ներկայացնելիս այսպես ասաց Րաֆֆի Հովհաննիսյանը: Ռուբինյանը հայտարարեց, թե ի դեմս «Ժառանգության» համամասնական ցուցակի՝ կուռ մի թիմ է ստեղծվել, որը հայտարարում է իր բարի նպատակների մասին. «Բայց պայքարը հանուն Հայաստանի ժողովրդավարության, ազատության այսօր չի սկսվել, եւ եթե ազնիվ լինենք՝ խորհրդարանական ընտրություններով չէ, որ պիտի ավարտվի: Ուրեմն՝ այն պայքարը, որը պիտի շարունակվի՝ պետք է լինի մեր գերնպատակը: Այդ պայքարում ի՞նչ տեղ մենք կգրավենք այս նոր թիմով՝ ես լիահույս եմ, որ այդ պայքարում մենք առաջնորդող դեր ենք կատարելու, դա է որոշելու նոր Հայաստանը եւ մեր սերունդների ապագան: Ահա դրա համար եմ ես գալիս»:

Րաֆֆի Հովհաննիսյանը ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանին ներկայացնելով՝ շեշտեց, թե նա կուսակցության խորհրդարանական խմբակցության առաջամարտիկն է: Ներկաները Բախշյանին հատուկ ջերմությամբ եւ «բրավո»-ներով ողջունեցին: Տիկին Բախշյանը հուզված էր իրեն այդչափ ջերմ ընդունելուց: «Այո, մենք գալիս ենք, եւ մեզ համար թանկ է յուրաքանչյուր ընտրողի քվեն, եւ այն մենք պաշտպանելու ենք: Մեզ համար արժեքավոր է յուրաքանչյուր ընտրողի քվեն, որովհետեւ նա է որոշելու մեր ներկայացվածությունը հայոց խորհրդարանում: Մեզ համար շատ կարեւոր է յուրաքանչյուր ընտրողի քվեն, որովհետեւ նրանով ենք մենք հզոր լինելու, եւ վերջապես՝ մեզ համար անչափ արժեքավոր է յուրաքանչյուր ընտրողի քվեն, որովհետեւ ինչպես անցած 5 տարում, այնպես էլ հաջորդ տարիներին, որպեսզի ինչպես ծառայել ենք, այդպես շարունակենք ծառայել եւ լավագույնս օգտակար լինել մեր երկրին, մեր պետականությանը, մեր սիրելի ժողովրդին՝ լուծելու համար նրա հոգսերը: Դրա համար մեզ անհրաժեշտ է 50 տոկոս, եւ դա դուք ապահովելու եք ձեր քվեներով: Մենք գալիս ենք»:

«Ժառանգության» քարոզարշավի մեկնարկի միջոցառման ժամանակ ներկայացվեց նաեւ քաղաքական այս ուժի եւ «Ազատ դեմոկրատների» նախընտրական ծրագիրը, որն ուղեկցվում էր Վահան Արծրունու եւ «Կարին» ազգային երգուպարի համույթի կատարումներով:

Միջոցառման ավարտին դրան ներկա քաղաքական տեխնոլոգ Կարեն Քոչարյանին «Առավոտը» խնդրեց գնահատել «Ժառանգության» քարոզարշավի մեկնարկը: Վերջինս ի պատասխան՝ ասաց, թե մեկնարկը բավականին հաջող էր, որ «Ժառանգության» PR-ը լավ է կազմակերպված. «Ես դեռ մինչեւ այս էլ ինչ-որ բաներ տեսել եմ «Ժառանգության», նաեւ «Ազատ դեմոկրատների» համագումարներում, նաեւ «Ժառանգության» նախընտրական շտաբի բացման ժամանակ, ու ինձ դուր են եկել իրենց մեծադիր քարոզչական պաստառներն ու «լայքերը»: Իրենք բավականին ոչ ստանդարտ քարոզչություն են իրականացնում, եւ «Ժառանգության» քարոզչական տեսահոլովակը, որն արդեն սկսել է հեռարձակվել հեռուստաընկերություններով, այս պահին, նրա գնահատմամբ, լավագույնն է:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

### Միջազգային դիտորդները մտահոգված են ընտրացուցակների որակով

Ապրիլի 6-ին հրապարակվեց ԵԱՀԿ եւ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների ընտրությունների Հայաստանի խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության առաջին միջանկյալ զեկույցը, որն ընդգրկում է մարտի 22-ապրիլի 2-ի ժամանակահատվածը: Զեկույցում մասնավորապես ասված է. «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց մտահոգությունն են հայտնել ընտրացուցակների որակի, ինչպես նաեւ արտասահմանում բնակվող մեծ քանակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ, որոնց անունները դեռեւս առկա են ընտրացուցակներում, եւ որի միջոցով կարելի է դիտավորյալ ավելացնել գրանցված քվեարկողների թիվը:

Իշխանության ներկայացուցիչները պնդում են, որ բնակչության եւ քվեարկողների ռեգիստրների որակը շարունակաբար բարելավվում է, որի արդյունքում աճում է քվեարկողների թիվը, դրան գումարվում են այլ գործոններ, ինչպիսին են 18 տարեկան դարձած քաղաքացիների եւ ՀՀ քաղաքացիություն ստացած սփյուռքահայերի թիվը: Այն քաղաքացիները, որոնք գրանցված բնակություն չունեն Հայաստանի Հանրապետությունում, ընտրություններից յոթ օր առաջ կարող են դիմել ԱՎՎ ՀՀ-ում իրենց ներկայիս բնակության վայրում քվեարկողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար: Նույն վերջնաժամկետը կպահանջվի նաեւ այն քվեարկողների համար, որոնք պլանավորում են քվեարկել ոչ թե իրենց գրանցման վայրում, այլ ուրիշ համայնքում: Այն քվեարկողները, որոնք չեն ընդգրկվել ընտրացուցակում, նույնպես կարող են դիմել այնտեղ ընդգրկվելու համար՝ ընտրություններից չորս օր առաջ, ինչպես նաեւ ընտրությունների օրը՝ մինչեւ քվեարկության ավարտը»:

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# Հայկոմկուսին նոր կարգախոս են առաջարկել

## «Ընտրիր եւ փնտրիր»

Գլխավոր կոմունիստ Ռուբեն Թովմասյանի համար Կոմունիստական կուսակցությանը մրցակից են բոլոր կուսակցություններն ու հատկապես Հայ ազգային կոնգրեսը: «Այս բոլորը, ինչի մեջ մենք ապրում ենք, շողոլից գցեցին ՀՀՇ-ականները: Նրանք երկիրը շողոլից գցեցին, խաղացին ազգայնական հարցերի վրա՝ Ղարաբաղի հարցի վրա: Այդ հաղթանակը բոլորինն է: Դրա մեջ մեծ բաժին ունեն ՍՈՎԵՏԱԿԱՆ բանակում ծառայած եւ ինտերնացիոնալիզմի գաղափարով դաստիարակված տղաները»,- երեկ ասուլիսում ասաց Ռ. Թովմասյանը՝ պնդելով, որ ՀՀՇ-ն է բոլոր կեղծիքների հեղինակը, որոնք պահպանվում են մինչ օրս:

ՀԱԿ անդամ Արման Մուսինյանից հետաքրքրվեցինք՝ կոմունիստներին մրցակից համարո՞ւմ են. «Մեր միակ հակառակորդը Հանրապետական կուսակցությունն է: Այսքանը, էլ ոչ մի մեկնաբանություն»:

Թե ինչ կլինի, եթե Կոմունիստական կուսակցությունը խորհրդարան մտնելու համար բավականաչափ ձայներ չհավաքի, պարոն Թովմասյանը բացատրեց. «Սոցիալիստական գաղափարն անմահ է: Ինչպես պահպանվել է այսքան տարի, այնպես էլ կշարունակի պահպանվել: Այսօր ամբողջ աշխարհի բնակչության 40%-ը սոցիալիզմի կողմնակիցն է»:

Կոմունիստական կուսակցության ղեկավարը հեռուստատեսային քաղաքական գովազդներից այն տպավորությունն է ստացել, որ մնացած բոլոր կուսակցությունները վերցրել են իրենց լոզունգները: Դա, պարոն Թովմասյանի դիտարկմամբ, ոչ թե գրագողություն է, այլ ընտրողներին խաբելու ձեւ. «Բոլորը սոցիալիզմ են կառուցում, բոլորն ասում են՝ ժողովրդի ծառաներն են: Այդ տեսահոլովակներն ինձ հուշեցին, որ նրանք զգում են, թե ժողովուրդն ինչպիսի սոցիալական անարդարության եւ սոցիալական ճնշման տակ է, եւ ստիպված են վերցնել Կոմկուսի ծրագրերից կամ լոզունգներից՝ առողջապահության, կրթության եւ սոցիալական մյուս հարցերի լուծումները տալու համար»:

Պարոն Թովմասյանին նոր լոզունգ են խորհուրդ տվել՝ «Ընտրիր եւ փնտրիր». «Բնակիչներն են խորհուրդ տվել, ուզում են ասել, որ դեպուտատ չկա էս չորս տարվա ընթացքում՝ ընկած ման են գալիս, չեն գտնում: ԱԺ-ում չկա, իրենց մոտ չի լինում, իրենց հետ չի խոսում, ժողովրդի դարդը չգիտի»:

Պարոն Թովմասյանը վերջում ընտրակաշառքի զավեշտալի մի դեպք պատմեց, բայց չներկայացրեց անուններ: Նրա խոսքերով՝ պատգամավորի թեկնածուներից մեկը վարսավիրանոցում ամեն հաճախորդի մոտենում ու ասում է՝ չվճարել, իր տեղը վճարված է:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

# Հոգեկան խնդիրներով անչափահասները՝ բախտի քմահաճույքին

## Տնից-տեղից զրկված նման անչափահասներին ղեկավարությունն էլ տեր չի կանգնում

Մեր երկրում հոգեկան խնդիրներով անչափահասները, որոնք ինչ-ինչ պատճառներով զրկված են ընտանեկան հոգատարությունից, զրկված են նաեւ պետական հոգածությունից: Ինչպես վստահեցնում են մասնագետները, այսօր Նորքի հոգեբուժական կենտրոնում անչափահասների համար ընդամենը 2-3 մահճակալ է նախատեսված, սակայն դա չի նշանակում, որ նման խնդիրներով երեխաների թիվն այդքան է: Ընդ որում, չնայած մասնագետների պահանջներին, մեր երկրում չկա մասնագիտացված որեւէ կենտրոն, որտեղ հոգ կտանեն հոգեկան խնդիրներ ունեցող անչափահասներին:

Դրա վառ ապացույցն է ապրիլի 6-ի «Առավոտի»՝ «Զատիկի» սանը ինքնասպանության փորձ է արել ուշադրության պակասի՞ց» հրապարակման հերոսուհին, որը մասնագետների պնդմամբ՝ հոգեկան լուրջ խնդիրներ ունի. ծնողներն էլ հրաժարվել են նրանից, իսկ մանկատները բացի նրանից, որ իրավունք չունեն նման երեխային խնամելու, նման մասնագիտական ուղղվածություն էլ չունեն:

Եթե այսօր ոստիկանը փողոցում հանդիպի հոգեկան շեղումով անչափահասի, որն, ասենք՝ ինքնասպանության փորձ է կատարում կամ էլ հասարակությանը վտանգ հասցնող որեւէ գործողություն է անում, ապա նրան «բռնելուց, փրկելուց» հետո ոստիկանությունն էլ չի կողմնորոշվում, թե ուր տանի: Երբ պարզվում է, որ ծնողներն ու հարազատներն էլ չեն ցանկանում իրենց անչափահաս երեխային այլեւս տիրություն անել, ոստիկանությունը ստիպված նրան ուղեկցում է մանկատուն: Իսկ մանկատանը նման երեխաները կրկնակի խնդիրներ են առաջացնում, նախ՝ մանկատան սաների համար, հետո էլ՝ հենց իրենց, քանի որ այդ հաստատությունում այդպիսի երեխաների առողջական խնդիրներով զբաղվող նեղ մասնագետներ չկան:



Ճիշտ է, մանկատունը կամ մեկ այլ խնամքի կենտրոն, որպես բարի կամքի դրսեւորում, շատ կարճ ժամանակ հոգ են տանում նման երեխաներին, սակայն դրանից հետո այդ երեխաները գնալու տեղ պարզապես չունեն: Ինքնասպանության փորձ կատարած «Զատիկի» սանը ճիշտ եւ ճիշտ նման իրավիճակում է հայտնված: «Առավոտի» հետ զրույցում «Զատիկի» տնօրենը պատմել էր, որ այդ երեխան մի քանի օր էլ Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոնում» է անցկացրել, սակայն ինչպես մեզ հետ զրույցում նշեց Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Միրա Անտոնյանը՝ այդ անչափահասին իրենց մոտ ոստիկանությունն է տարել, իսկ իրենք նրան հոգեբույժի կոնսուլտացիայի են ուղեկցել, որտեղ պարզվել է, որ այդ երեխան լուրջ բժշկական ծառայության կարիք ունի, ուստի իրենք նման խնդիրներով երեխաներին չեն կարող ապաստան տալ: Տիկին Միրայի պատմելով՝ որքան էլ փորձել են հորը համոզել երեխային տուն տանել՝ ծնողը հրաժարվել է: Հոգեբուժարանից հետո, ինչպես ՀՕՖ-ից ասացին, ոստիկանությունը փորձել է երեխային կրկին կենտրոն ուղղորդել, սակայն վերջինս հրաժարվել է: Ի վերջո, ինքնասպանության փորձ կատարած երեխան հայտնվել է «Զատիկում», սակայն ինքնասպանության մտքից այդպես էլ չի հրաժարվում: Միրա Անտոնյանի խոսքերով՝ սեփական փորձից ելնելով, բազմիցս բարձրաձայնել են նման կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը, սակայն երեխաների համար պատասխանատու պետական մարմինները գտնում են, որ դրա անհրաժեշտությունը չկա: Միրա Անտոնյանի ներկայացմամբ՝ վերջերս խորհրդարանական լսումներից մեկի ժամանակ հստակ ներկայացրել են խնդիրը եւ նշել, որ հոգեբուժական խնդիրներով լքված անչափահասները ուղղակի անտերության են մատնվում, եւ անհապաղ պետք է մասնագիտացված կենտրոն ստեղծել նրանց տեղավորելու համար: Առողջապահության պատասխանատուները տիկին Անտոնյանին հավաստիացրել են, որ իրենց ունեցած տվյալներով՝ տարեկան 1-2 նման երեխա կա, ուստի այդ պարագայում ծախսեր անելն ու կենտրոն ստեղծելը նպատակահարմար չէ: Մինչդեռ իրականում, ըստ տիկին Անտոնյանի, միայն իրենց կենտրոնում 1 տարի 4 ամսվա ընթացքում նման խնդիրներով 16 դեպքի են առնչվել: Մ. Անտոնյանի խոսքերով՝ «Առողջապահության նախարարությանը պաշտոնական նամակ գրեցինք, բոլոր տվյալները ներկայացրեցինք, որ այսքան դեպք կա, որ այս երեխաների համար հատուկ ծառայություններ են անհրաժեշտ, ամեն մեկին բավականին երկար բուժում է պահանջվում՝ նեղ մասնագետների՝ հոգեբույժների, սոցաշխատողների, նույնիսկ ոստիկանների օգնությամբ: Մեզ թվաց՝ եթե տվյալներին ծանոթանան, մի բան կձեռնարկեն, բայց փետրվարից մինչեւ հիմա ոչ մի արձագանք չկա: Մենք անընդհատ այդ հարցը բարձրացնում ենք ու ասում՝ դուք հազար ու մի հաստատություն ունեք, ու հասկանալի չէ՝ դրանք ինչի համար են. մանրմունր հարցերի համար, ոչ այնքան էլ լուրջ խնդիրներ ունեցողների համար: Մենք ասում ենք՝ դրանցից մեկը վերաբացեք, վերականգնողական կենտրոն սարքեք, ինչ էլ որ արժենա, դա խիստ անհրաժեշտ է: Լավ, այդ երեխաներն ի՞նչ լինեն, հո չե՞նք սպանի, նրանց ճակատագիրը օդում է: Գյումրիի ցերեկային կենտրոնի մեր կոլեգաներն էլ վստահեցնում են, որ Գյումրիում էլ շատ կան հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաներ: Նույնը Վանաձորից են պահանջում»:

Թե կոնկրետ ո՞ր գերատեսչությունը պետք է նախաձեռնի նման կենտրոնի հիմնումը, մեր հարցին տիկին Անտոնյանը պատասխանեց՝ բոլոր կառույցները միասին պետք է աշխատեն: Բացի այդ, երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովում ներկայացված են բոլոր գերատեսչությունների պաշտոնյաները, որոնք առնչվում են երեխաների խնդիրների հետ, եւ հենց այս կենտրոնում, ըստ տիկին Անտոնյանի, գոնե պետք է բարձրացվեն, թե ինչ ծառայությունների ու ինչի կարիք կա:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

## ՀՅԴ-ի նոր խոստումները ԱՊՊԱ-ից մինչեւ գազի, ջրի սակագներ

Երեկ Հայ հեղափոխական դաշնակցությունը հրապարակեց իր նախընտրական ծրագիրը: «Շոուներ, թատրոններ, պարեր չենք անում»,- ՀՅԴ-ի նախընտրական ծրագիրն այսպես ներկայացրեց կուսակցության անդամ Աղվան Վարդանյանը՝ նշելով, որ դրա փոխարեն փորձելու են հանրությանը ներկայացնել իրենց ծրագիրը:

Իսկ ՀՅԴ-ի ծրագիրն աչքի է ընկնում հատկապես սոցիալական բլոկի բավականին նոր խոստումներով: Այսպես. ՀՅԴ-ն խոստանում է առաջիկա 5 տարիներին գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման եւ խմելու ջրի սակագները չբարձրացնել, ԱՊՊԱ-ի սակագները վերանայել եւ 10 հազար դրամով իջեցնել, բացել 200-225.000 նոր աշխատատեղ: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Արսեն Համբարձումյանի խոսքերով՝ ոստիկանների, բուժաշխատողների, ԱԱԾ եւ պաշտպանության համակարգերի աշխատակիցների միջին աշխատավարձը դարձնելու են 500 հազար դրամ. «Նվազագույն աշխատավարձը, մեր հաշվարկներով, կարող ենք ներկայիս 32500 դրամի փոխարեն հասցնել 63 հազար դրամի, այսինքն՝ կրկնակի բարձրացնել: Աղքատության շեմ է համարվելու կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը: Յուրաքանչյուր քաղաքացու՝ դրանից ոչ ցածր եկամուտ ստանալու իրավունքը կերաշխավորվի»:

ՀՅԴ-ի խոստումները շռայլ են նաեւ թոշակառուների եւ հաշմանդամություն ունեցողների մասով: Միջին աշխատանքային կենսաթոշակը ներկայիս 31.250 դրամի փոխարեն կկազմի 63 հազար դրամ, իսկ սահմանափակ կարողություններով մարդկանց աշխատանքի տեղավորելու համար ձեռնարկություններին գայթակղելու են՝ նվազեցնելով շահութահարկը: Ժողովրդագրության մեջ ՀՅԴ-ն խոստանում է «բազմացնել» մեր բնակչությունը՝ յուրաքանչյուր տարի 50 հազարով, 5 եւ ավելի երեխա ունեցողներին նվիրել անվճար բնակարան, ընտանեկան նպաստի համակարգը վերանայել, մինչեւ 7 տարեկան երեխաների ամենամսյա նպաստներն ավելացնել: Մանկապարտեզներն էլ ՀՅԴ-ի ծրագրով անվճար են լինելու ոչ միայն Երեւանում, այլեւ ողջ հանրապետությունում:

Դաշնակցությունը նաեւ ավանդների փոխհատուցման յուրօրինակ ձեւ է որոշել կիրառել. եթե չվճարել դրամային արտահայտությամբ, ապա թույլ տալ դրա փոխարեն գոնե հայրենական արտադրության ապրանքներից կամ ծառայություններից օգտվել՝ որպես վճարման միջոց:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# Մարաշում մանուկները «լխճված» են երթեւեկում

## Գծատերը մարդկանց կյանքի, առողջության ու նյարդերի հաշվին միլիոններ է դիզում

«Հարգելի քաղաքապետ, արդեն տասը տարուց ավելի է՝ մարաշցիները երթեւեկում են անմարդկային ու ստորացված պայմաններում, օրվա պիկ ժամերին պարզապես անհնար է օգտվել հասարակական տրանսպորտից: Այս համայնքը սպասարկող թիվ 22, 22 Ա միկրոավտոբուսները, բացի այն, որ անմխիթար վիճակում են, երթեւեկում են գերբեռնված: Կքված ու իրար գիրկ երթեւեկելն այս համայնքում արդեն օրինաչափություն է դարձել: Եթե մեծահասակները ինչ-որ տեղ հանդուրժում են, դիմանում ու հարմարվում, ապա այդ իրավիճակը թե՛ հոգեպես եւ թե՛ ֆիզիկապես շատ վատ հետեւանք է թողնում մանուկների վրա: Ամեն օր այդ փոքրիկները մանկապարտեզ, դպրոց են գնում, բառի բուն իմաստով, «լխճված» վիճակով, պատավորությունն այնպիսին է, որ Նորք-Մարաշում, տրանսպորտի առումով, մութ ու ցուրտ տարիները դեռ շարունակվում են: Այդ տարիներին ապրած սթրեսը՝ ավտոբուսներից կախված երթեւեկելը, էլեկտրաէներգիայի բացակայությունը եւ այլն, մեր սերնդի վրա շատ վատ հետք է թողել: Այդ ժամանակ երեւույթը համատարած էր, եւ մարդիկ ըմբռնումով էին մոտենում, սակայն այս լուսավոր դարում նույնը վերապրում են մեր մանուկները:

Մարաշի ոլորապտույտ ճանապարհների պարագայում առավել վտանգավոր է այդքան ուղեւորներով բեռնված երթեւեկելը: Մարդկանց նյարդերն արդեն տեղի են տալիս, եւ գրեթե ամեն օր «բախումներ» են լինում վարորդների հետ: Ուղեւորների դժգոհություններից նյարդայնացած վարորդներն էլ մշտապես պատասխանում են՝ «Բա գծի պլան ենք տալիս, ո՞նց տակից դուրս գանք»: Ստացվում է՝ «գծի պլանը» կատարում են ուղեւորների առողջության ու անվտանգության հաշվին: Արդյունքում գծատերը՝ Օհանյանների գերդաստանը, միլիոններ է կուտակում, իսկ սովորական քաղաքացիներս նյարդեր ենք քայքայում: Ամենավիրավորականն այն է, որ Մարաշի բնակիչների հազարավոր բողոքներին ոչ մի պետական մարմին չի արձագանքում: Ճանապարհային ոստիկաններն էլ աչք են փակում իրենց նախկին շեֆին՝ Մարգար Օհանյանին պատկանող երթուղագծի միկրոավտոբուսի վարորդների խախտումների վրա:

Այս նախընտրական օրերին Նորք-Մարաշում տասնյակ նախընտրական շտաբներ են բացվել՝ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, առանձին պատգամավորի թեկնածուների: Ամեն օր, օրը մի քանի անգամ այդ միկրոավտոբուսները գերբեռնված անցուդարձ են անում այդ շտաբների կողքով, սակայն ոչ մի քաղաքական ուժի այսօր նման կարեւոր հարցերը բացարձակ չեն հետաքրքրում: Այս օրերին այդ ուժերը, աղանդավորների պես ընկած դռնեդուռ, «մարդասիրությամբ» են զբաղված: Նրանց ամպագոռգոռ լոզունգներն էլ մարդկանց ուղղակի հունից հանում են: Տասնյակ տարիներ է՝ երկրի ղեկը հանրապետականների ձեռքին է, այդքան տարիների ընթացքում Մարաշի տրանսպորտի առումով ոչ մի հարց չի լուծվել, կարող էին, չէ՞, փոխել: Որ չեն փոխել՝ այսօր ո՞նց հավատանք ՀՀԿ-ին: «Բարգավաճ Հայաստանն» էլ, որը քանի տարի է՝ խորհրդարանում է, մինչ այդ խոստանում էր բարգավաճ երկիր, ո՞վ է տեսել բարգավաճ երկրում, տրանսպորտի այս առատության մեջ ինչ-որ մեկի բիզնեսին զարկ տալու համար քաղաքացիներին այդքան ստորացնեն:

Ժամը 21-ից հետո երթուղագծում 1 կամ 2 միկրոավտոբուս է երթեւեկում: Մինչդեռ նրանք պարտավոր են մինչեւ ժամը 23-ը ապահովել ուղեւորների տեղափոխումը: Ժամերով անհույս սպասելուց հետո մարդիկ ստիպված են լինում տաքսիներով տուն հասնել: Օրական 2 հազար դրամով աշխատող մարդը 1000 դրամը միայն տաքսուն է վճարում: Գծատերը ոչ մի պարագայում չի տուժում. Օհանյանների ընտանիքին է պատկանում նաեւ «Անգել» տաքսի սերվիսը, որը Մարաշում եղած միակ սերվիսն է: Այնպես որ, միկրոավտոբուսները ժամանակից շուտ գծից հանելը նույնպես նրանց շահերից է բխում: Երթուղագծից մեքենաները պակասեցնում են, որպեսզի զարկ տան «Անգելի» գործին: Տաքսիներն ամեն օր շարվում են Շրջանայինի՝ դեպի Մարաշ բարձրացող կանգառին կից: Մարդիկ տրանսպորտին սպասելուց հոգնած, նյարդայնացած տաքսու ծառայությունից են օգտվում: Եվ այդպես տասնյակ տարիներ»:

Նորք-Մարաշ համայնքի բնակիչներ

Առավոտ daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 10.04.2012

# Տուժողը մարմնավաճառներն էին

## Հաճախորդների մեջ «գին գցող» պաշտոնյաներ էլ էին



Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Արշակ Վարդանյանի նախագահությամբ, արագացված դատական ընթացակարգով ավարտել է Գոհար Ղազարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի դատաքննությունը:

Նախկինում ծանր եւ միջին ծանրության հանցանքների կատարման համար երկու անգամ դատապարտված՝ 3 երեխաների մայրն այս անգամ դատապարտվեց 5 տարվա ազատազրկման, չնայած մեղադրողը՝ Երեւան քաղաքի դատախազության դատախազ Ռուզաննա Ասատրյանը, բողոք է բերել ՀՀ վերաքննիչ դատարան՝ պահանջելով «հստակեցնել դատավճիռը», նշանակել հանցանքին համաչափ պատիժ:

Գոհար Ղազարյանը գտնվում է արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում:

Նախկին 4 տարվա ազատազրկումը շմարված (փորձաշրջան էր նրա նկատմամբ այդ չափով նշանակվել)՝ Գոհար Ղազարյանը 2008 թվականից մինչեւ 2010թ. օգոստոսի 9-ն ընկած ժամանակահատվածում, ծանոթանալով մարմնավաճառներ Աննա Ներսեսյանի, Նելլի Աղաջանյանի, Լիանա Սամադուրովայի, Սաթենիկ Կարապետյանի, Ալվինա Հարությունյանի, Աննա Մարտիրոսյանի, Ալիսա Գյոզալյանի, Աելիտա Միքայելյանի եւ անչափահաս մարմնավաճառներ Ա. Բ.-ի եւ Ռ. Կ.-ի հետ, նախապես տեղյակ լինելով, որ նրանք զբաղվում են մարմնավաճառությամբ՝ վարձատրությամբ միջնորդել էր վերջիններիս սեռական հարաբերությունների մեջ մտնել իր կողմից նախապես գտնված հաճախորդների հետ: Յուրաքանչյուր դեպքում մարմնավաճառների կողմից հաճախորդներին մատուցված «սեռական ծառայությունների» դիմաց նրանցից կամ հաճախորդներից տիկին Գոհարը պահանջել եւ ստացել էր 5000-ական ՀՀ դրամ՝ միջնորդավճարներ:

Դատարան պիտի դատակոչվեին 10 եւ ավելի մարմնավաճառները, ում գրպանել էր, ըստ էության, տիկին Գոհարը, չէր բացառվում, որ դատարանը լսեր նաեւ «հաճախորդներին», որոնց մեջ «գին գցող» պաշտոնյաներ էլ էին:

Սակայն ամբաստանյալ Գ. Ղազարյանը դատական անդրանիկ նիստին հայտարարեց, որ առաջադրված մեղադրանքն իրեն պարզ եւ հասկանալի է, համաձայն է դրա հետ եւ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում: Նկատենք, որ մեղադրողն արագացված դատաքննության կարգով քննելու դեմ չի առարկել:

Դատարանը հաստատված համարեց մեղադրանքը՝ ամբաստանյալի խոստովանական ցուցմունքներով, վկաներ Լիանա Սամադուրովայի, Աննա Ներսեսյանի, Նելլի Աղաջանյանի, Սաթենիկ Կարապետյանի, Ալվինա Հարությունյանի, Աննա Մարտիրոսյանի, Ալիսա Գյոզալյանի, Ալվինա Հայրապետյանի, Քրիստինե Լիսենկոյի, Աելիտա Միքայելյանի, Անահիտ Բեգոյանի եւ Ռոզա Կոստանյանի ցուցմունքներով:

Ամբաստանյալ Գոհար Ղազարյանի նկատմամբ նշանակվող պատժի տեսակը եւ չափը որոշելիս դատարանը հաշվի առավ հետեւյալը. որ ամբաստանյալն անկեղծորեն զղջացել է եւ իրեն լիովին մեղավոր է ճանաչել, ֆիզիկապես վատառողջ է, սոցիալապես անապահով ընտանիքի անդամ է, ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից բնութագրվում է դրականորեն, խնամքին ունի 4 անձ, որոնցից 2-ը՝ մինչեւ 14 տարեկան, 1-ն անչափահաս է, ինչպես նաեւ հիվանդ մայրը:

Դատարանը փաստեց, որ այս քրեական գործով իրեղեն ապացույց չկա, քաղաքացիական հայց չի ներկայացվել եւ վճռեց նաեւ ամբաստանյալ Գ. Ղազարյանի գույքի նկատմամբ արգելանք չկիրառել:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Պատերազմի դեմքը

## Կամավորականը զրկվել է զինվորական թոշակից



Վահրամ Քառյանը թոշակի ենթակա է,
բայց չի ստանում:

Երբ ղարաբաղյան պատերազմի նախկին մարտիկն իմացավ, որ ինքը զրկվել է զինվորական հաշմանդամության թոշակից, աչքերը մի պահ մթնեցին: Իրեն չկորցնելով՝ կարծես ելքը գտավ՝ կգնամ, կաշխատեմ: Բայց նույն վայրկյանին հիշեց, որ աշխատունակ չէ, ի վիճակի չէ անգամ ծանրություն բարձրացնել: 40-ամյա վանաձորցի Վահրամ Քառյանի համար պատերազմն ավարտվեց՝ դեռ չսկսած:

1991 թվականն էր, երբ Օդեսայում թողնելով ժամկետային զինվորական ծառայությունը, եկավ Հայաստան ու զինվոր դարձավ արդեն հայրենիքում՝ մասնակցելով Լաչինի միջանցքի ազատագրման գործին:

Արդեն 1992 թվականի ավարտն էր, երբ պատերազմի ընթացքում ձեռք բերեց լյարդի, ստամոքսի հիվանդություններ ու դրանց պատճառով հեռացավ մարտի դաշտից:

Սակայն պատերազմի սեւ հետքը կարծես խորը դրոշմվեց Վահրամի ճակատագրի վրա. առողջական խնդիրների լուծման ծայրը հազիվ նշմարող Վահրամի հարազատները բժիշկների խորհրդով համաձայնեցին Վահրամի ստամոքսի 2/3-ի մասնահատմանը, բայց ամենասարսափելին այն էր, երբ նկատեցին, որ նա նաեւ հոգեկան խնդիրներ ունի:

2004-2010թթ. Վահրամ Քառյանի նկատմամբ մեկ տարի ժամանակով բժշկասոցիալական փորձաքննությունների արդյունքում սահմանվել էր զինվորական հաշմանդամության երկրորդ խումբ:

Բժիշկները ախտորոշել էին զինվորական ծառայության պատճառական կապով խրոնիկական պերսեստող հեպատիտ կրկնվող ընթացքով, ստամոքսի խոցային հիվանդություն, մասնատված ստամոքս՝ բարդացված դեմպինգ համախտանիշով, միջին ծանրության, խրոնիկական պանկրեատիտ, մարսողական ֆունկցիայի զգալի խանգարում:

Սակայն 2011թ. դեկտեմբերին ամենամյա ստուգումների արդյունքում Վահրամի նկատմամբ սահմանվել է հաշմանդամության երկրորդ խումբ՝ ընդհանուր հիվանդությամբ՝ պատճառական կապով անժամկետ շիզոֆրենիա՝ պարանոիդ ձեւ, էպիզոդիկ աճող դեֆեկտ, դեպրեսիվ պարանոիդ համախտանիշ:

Նոր ստուգումների արդյունքում Վահրամի ունեցած մյուս հիվանդությունները՝ խրոնիկական պերսիստող հեպատիտը, ստամոքսի խոցային հիվանդությունները նրան հաշմանդամ չեն դարձնում, քանի որ ստուգումները ցույց են տվել, որ դրանք ներկայումս չեն հանգեցնում որեւէ տեսակի, որեւէ աստիճանի կենսագործունեության սահմանափակման:

Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետի տեղակալ Արուսա Սիմոնյանը «Առավոտին» պարզաբանում է, որ Վահրամ Քառյանի մոտ վերոնշյալ հիվանդությունների արտահայտվածության աստիճանը բարձր է եղել, ազդել է նրա կենսագործունեության վրա, այժմ, սակայն, նման ազդեցության բացակայության պայմաններում, երբ հիվանդի վիճակը լավացել է, զինվորական հաշմանդամություն չի կարող սահմանվել. «Այս պահին նա ունի զինվորական հաշմանդամության տանող մեկ հիվանդություն՝ շիզոֆրենիա, սակայն պատերազմի հետ դրա ունեցած պատճառահետեւանքային կապը հաստատող փաստաթղթեր չկան, ուստի Վահրամ Քառյանի նկատմամբ սահմանվել է ընդհանուր հիվանդությամբ թոշակ»:

Հակառակ սրան՝ Վահրամի ընտանիքի անդամները պնդում են, որ նրա վիճակը, համեմատած նախորդ տարիների հետ, չի լավացել, ավելին, զինվորական թոշակից զրկվելը ազդել է նրա հոգեբանության վրա:

«Վահրամը հույսեր էր կապում, որ թոշակը կբարձրանա, ինքը կկարողանա ինքնուրույն հոգալ իր կարիքները, մանավանդ որ՝ չի կարող աշխատել: Նրա համար վիրավորական է, որ ողջ կյանքը պատերազմի դաշտում կործանեց, իսկ այժմ նույնիսկ դա հաշվի չեն առնում»,- ասում է Վահրամի եղբայրը՝ Արման Քառյանը:

Վահրամի հարազատները դիմել են պատկան մարմիններին՝ նրա նկատմամբ լրացուցիչ բժշկասոցիալական փորձաքննություն նշանակելու պահանջով:

«Իրենց ասելով՝ հրաշք է տեղի ունեցել: Եթե լավացել է, ապա ինչու է ամբողջ օրը բողոքում գլխացավերից, գլխապտույտից, մեջքի ու ստամոքսի ցավերից»,- զարմանում է Արման Քառյանը:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

Վանաձոր

### Խտրականության դրսեւորո՞ւմ

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ, պետական դավաճանության համար Կարեն Մեհրաբյանին, Ռոման Մաթեւոսյանին դատապարտեց, համապատասխանաբար, 14 եւ 10 տարվա ազատազրկման, իսկ օժանդակելու համար Աշոտ Չտրկյանին դատապարտեց 10 տարվա ազատազրկման:

Ինչպես տեղեկացրել ենք, մեղադրող Արամ Ամիրզադյանը պաշտպանում էր այն մեղադրանքը, ըստ որի՝ Կ. Մեհրաբյանը, Ռ. Մաթեւոսյանը եւ Ա. Չտրկյանը Թուրքիայում ընկել էին Ադրբեջանի հետախուզական ծառայությունների տեսադաշտ եւ ստացել առաջարկ՝ համապատասխան վարձատրության դիմաց համագործակցել նրանց հետ: Մասնավորապես, նրանց հանձնարարվել էր տեղեկություններ հայթայթել ՀՀ եւ ԼՂՀ զինված ուժերի, դրանց հրամանատարական կազմի, ստորաբաժանումների եւ տեխնիկայի թվաքանակի վերաբերյալ:

Այս գործով ամբաստանյալ Կարեն Պետրոսյանը եւ Արթուր Ավետիքյանը կալանավորվեցին դատարանի դահլիճից: Ավետիքյանի մյուս եղբոր՝ Դավիթ Ավետիքյանի նկատմամբ պատիժ սահմանվեց 500 000 դրամի չափով տուգանքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա անչափահաս երեխա ունի:

Դատական նիստերը մինչ այդ, բացի «Առավոտից» եւ եւս երկու տպագիր թերթերից, որեւէ հեռուստաընկերություն չէր լուսաբանել:

Դատավոր Մնացական Մարտիրոսյանի որոշմամբ արգելվել էր լուսանկարել, սակայն նախորդ ուրբաթ օրն այն թույլատրվեց հանկարծահայտ հեռուստաընկերություններին:

Ռ. Մ.

### Երկրորդ խմբի հաշմանդամը կախվել է

Ապրիլի 8-ին Տավուշի մարզի սահմանամերձ Կոթի գյուղում՝ իր տան կից շինությունում կախվել է 66-ամյա Նորայր Կիրակոսյանը: Նա խորհրդային տարիներին բանվոր է աշխատել տեղի խորհտնտեսությունում: Նորայրը երկրորդ խմբի հաշմանդամ էր, տառապում էր բրոնխների ասթմա հիվանդությամբ, մի քանի ամիս առաջ էլ ինսուլտ է ունեցել: Այս մասին տեղեկացանք Կոթիի գյուղապետ Ֆելիքս Մելիքյանից: Դեպքի կապակցությամբ քննություն է կատարվում: Ն. Կիրակոսյանը երեք որդի ունի, որոնցից մեկի՝ պայմանագրային զինծառայողի հետ էր ապրում: Նրանց ընտանիքի սոցիալական վիճակը բնութագրվում է որպես միջին:

Այս տարի Կոթի գյուղում եղել է 13 մահ եւ 6 ծնունդ: Գյուղապետ Ֆ. Մելիքյանը մահվան դեպքերի շատությունը բացատրում է գարնանը գյուղի տարեցների մոտ հիվանդությունների սրացմամբ: Համայնքի ղեկավարը հուսով է, որ մինչ տարեվերջ, նախորդ տարվա պես, ծնունդների թիվը կգերազանցի մահվան դեպքերին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Ինչ երգ «կերգեն» քաղաքական ուժերը քարոզարշավին

## Մյուսները՝ ռոքից մինչեւ ազգային գոհարներ, իսկ ՀԱԿ-ը միայն մեղեդի կհնչեցնի

Վերջին շրջանում մեր երկրում քաղաքական ուժերը սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել քարոզարշավային երգերին ու քաղաքական բնույթի տեսահոլովակներին: Արվեստներից ամենադյուրամարս ու վարակիչ երգի ժարին արագ արձագանքում են հասարակության գրեթե բոլոր շերտերը: Ինքներս դրանում համոզվեցինք, երբ ԱՄՆ-ի՝ նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրությունների քարոզարշավը դեռ չսկսած, Բարաք Օբամայի հակառակորդ Միթ Ռոմնիի երգի տեսահոլովակը մեծ աղմուկ հանեց ոչ միայն իր երկրում: Երգն այն մասին էր, թե ի՞նչ արհավիրք է սպասում Ամերիկային, եթե հանկարծ ԱՄՆ նախագահ Օբաման վերընտրվի:

Հիմա դառնանք մեր երկրին ու մեր խորհրդարանական ընտրություններին: Երեկվանից մեկնարկել է քարոզարշավը, եւ հայաստանյան TV-ներով մինչեւ մայիսի 4-ը հեռուստահանդիսատեսը կլինենք նոր տեսահոլովակների:

«Առավոտը» որոշ կուսակցություններից հետաքրքրվեց այս ընտրություններին նրանց քարոզարշավային երգերով:

ՕԵԿ-ական Հեղինե Բիշարյանն ասաց, որ իրենք հատուկ երգ չեն պատվիրում քարոզարշավներում հնչեցնելու համար. «Ընտրարշավին, համոզված ենք, ամենաբնորոշը կուսակցության օրհներգը հնչեցնելն է: Մենք ունենք երկու օրհներգ, որոնք, իմ կարծիքով, էմոցիոնալ են ու ոգեւորող: Սա դասական ձեւ է, նույն սկզբունքով էլ նկարահանված է մեր տեսահոլովակը: Այս առիթով նախորդ տարիներին քանիցս գովեստի խոսքեր եմ լսել քաղաքացիներից: Ավելորդ ենք համարում նոր բաների մեջ մտնելը (նկատի ունի հատուկ երգ պատվիրելն ու ձայնագրելը -Ս. Դ.)»:



ՀԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Ռուբեն Թովմասյանը փոխանցեց, թե իրենք եղել եւ մնում են հավատարիմ Արամ Խաչատրյանի ու Սարմենի հեղինակած Խորհրդային Հայաստանի հիմնին. «Ափսոս, որ այդպես մեր երկրի հիմնը փոխվեց ու դարձավ «Մեր հայրենիքը»: Ինչո՞ւ պիտի Նալբանդյանի «թշվառ, անտեր» արտահայտությունը փոխվեր «ազատ, անկախ»-ով: Մանավանդ նալբանդյանական տողերը իսկապես բնորոշում են մեր երկրի այսօրվա վիճակը: Համոզված եմ, որ Խորհրդային Հայաստանի հիմնը շատերին է հոգեհարազատ, մեր տեսահոլովակում էլ խոսուն կադրեր են»:

ՀՅԿ-ական Էդուարդ Շարմազանովը հիշեցրեց, որ 2007-2008-ին իրենց նախընտրական երգը եղել է ռոքի ժանրում, «Էմփիռել» խմբի եւ դրա մենակատար Սարգիս Մանուկյանի բարձրարվեստ մեկնաբանմամբ. «Ինչ վերաբերում է նախընտրական այս շրջանին, մենք ունենք ե՛ւ հայրենասիրական բնույթի երգ, ե՛ւ հատուկ մի ստեղծագործություն «թեթեւ» ոճի մեջ՝ ուղղված երիտասարդությանը: Հավատացած ենք, որ դրանք նույն հոգեվիճակն են արտահայտում, այսինքն՝ տեքստային ու մեղեդային առումով լավատեսական են: Հուսով ենք, որ քարոզարշավային մեր երգերը մարդկանց կհաղորդեն դրական էմոցիաներ»:

ՀԱԿ-ից Արման Մուսինյանը հայտնեց, թե իրենք ընտրել են ոչ թե երգի ժանրը, այլ բոլոր ժամանակներում ամենաընկալելին՝ իր ձեւակերպմամբ, նորին գերազանցություն մեղեդին առանց տեքստի. «ՀԱԿ-ը տեքստով ավելի հակված է դիմել հանրահավաքի ու նման միջոցառումների մասնակիցներին, ինչին որ հավատարիմ մնացինք նաեւ ԱԺ ընտրությունների առիթով: Կարճ ասած՝ երգի տեքստը փորձում ենք փոխհատուցել կենդանի խոսքով»:

120-ամյա ՀՅԴ կուսակցության անդամ Լիլիթ Գալստյանն էլ ասաց, թե իրենք՝ դաշնակցականները, թեեւ ունեն պատրաստած 2 երգ՝ խմբերգային եւ ռոքի ժանրում, այնուամենայնիվ, քարոզարշավի ընթացքում կհնչեցնեն մշակութային ազգային գոհարներից՝ դաշնակցական, հեղափոխական երգեր, որոնք հայոց պատմության արտացոլումն են. «21-րդ դարում, մասնավորաբար երաժշտարվեստում, նոր արժեքներ կան, եւ մենք էլ ուզում ենք իրապես մրցունակ լինել: Օրինակ, քարոզարշավային՝ ռոքի ժանրում գրված երգը ուղղված է երիտասարդությանը, որով արտահայտում ենք նրա վրա շեշտը դնելու մեր համարումը»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Կրթական համակարգի հիմնական խնդիրը կրկնուսույցների դեմ պայքա՛րը չէ

Ուսումնական պրոցեսը դպրոցում ենթադրում է անընդհատ բարեփոխումների իրականացում՝ թե ծրագրային նյութի ծավալային իմաստով, թե նյութի մատուցման նոր ձեւերի, մեթոդների իմաստով: Որպեսզի մենք կարողանանք ճիշտ ըմբռնել կամ հասկանալ՝ որեւէ փոփոխություն դպրոցում բարեփոխում է, թե հակառակը, մի պահ փորձենք հասկանալ՝ որն է այն առանցքը, այն հենման կետը, որի շուրջ պտտվում է կամ որի վրա հենվում է հայոց դպրոցը կամ հայեցի կրթությունը:

Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ այդ առանցքը կամ հենման կետը հայ օրինակելի ուսուցիչն է՝ իր մասնագիտական բարձր որակավորմամբ եւ բարոյա-կամային բարձր հատկանիշներով: Իր այդպիսի կեցվածքով հայ ուսուցիչը դասարանում եւ պատասխանատու ու սիրող ծնող է, եւ գիտելիքի անսպառ աղբյուր: Մեր ժողովուրդը իմաստուն խոսքեր ունի, որոնցից մեկը պնդում է, որ «պատերազմի դաշտում կռվում են զինվորները, իսկ հաղթում կամ հաղթվում են ուսուցիչները»:

Սովետահայ դպրոցի նպատակը սովետական քաղաքացի դաստիարակելն էր, սակայն այդ դպրոցը հայեցի կրթություն էր տալիս իր սաներին: Եթե մի դպրոցում կար գոնե մեկ, ըստ էության, կայացած ուսուցիչ, այդ դպրոցը խորին հարգանք ու հեղինակություն էր վայելում:

Ցանկացած ուսուցչի վերաբերվում, նրա մասին խոսում էին խորն ակնածանքով: Հատկապես ցածր դասարաններում այդ ակնածանքն այնքան մեծ էր, որ մենք մեր սիրելի ուսուցիչներին վերագրում էինք Աստվածանման հատկություններ: Ուսուցչի մասնագիտությունը համարվում էր սուրբ մասնագիտություն. այնպես, ինչպես եղել է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ժամանակներում:

Մեր ժողովրդի այն ստվար հատվածը, որն, ըստ էության, Քրիստոնեական արժեհամակարգի կրողն է, շատ լավ գիտի այդպիսի ուսուցչության արժեքը: Պատահական չէ, որ Մեծն աշուղ Ջիվանին իր «Ձախորդ օրեր» քերթվածքի մեջ գրում է. «Երկիրն ուսյալ զավակին է փայփայում մոր պես»: Իսկ նույնքան մեծ աշուղ Շիրինն իր «Երբ զորաց Տերն Աստված» քերթվածքում այդպիսի ուսուցչի ճշգրիտ սահմանումն է տալիս եւ նրան կոչում «ազգային համալսարան»: Այդպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ որեւէ փոփոխություն հայոց դպրոցում բարեփոխում չէ, եթե այն սասանում է կայացած ուսուցչի հեղինակությունը դպրոցում կամ շրջապատում:

Այս տեսանկյունից ոչ մի չափով չի արդարացվում տարիներ առաջ ԿԳ նախարարության կողմից իրականացված դպրոցի, այսպես կոչված, «օպտիմալացման» ծրագիրը, երբ բազմաթիվ վաստակաշատ ուսուցիչներ վտարվեցին դպրոցից, որպեսզի նրանց վճարվող չնչին աշխատավարձերի հաշվին չվտարված ուսուցիչները «ստանան» արժանավայել աշխատավարձ:

Տարիներ շարունակ եւ մինչ օրս արհամարհական երանգով եւ տարբեր ամբիոններից խոսվում է կրկնուսույցների մասին: Խոսվում է այնպիսի ժրաջանությամբ եւ արհամարհանքով, կարծես այսօրվա կրթական համակարգի հիմնական խնդիրն այդ կրկնուսույցների դեմ պայքարելն է: Չի էլ կոնկրետացվում, թե ով է այդ կրկնուսույցը, եւ ինչ է նշանակում կրկնակի ուսուցանել: Սովետական շրջանում էլ կային կրկնուսույցներ, բայց անհամեմատ ավելի քիչ, քան հիմա:

Նախ եւ առաջ նշենք, որ այդ կրկնուսույցները, ինչպես առաջ, այնպես էլ հիմա, մեր լավագույն ուսուցիչներն ու դասախոսներն են: Քանի որ սովետական ուսուցչի աշխատավարձը եւ սոցիալ-տնտեսական պայմաններն անհամեմատ լավ էին, քան հիմա, ուսուցիչների փոքր մասն էր զբաղվում լրացուցիչ՝ կրկնուսույցի աշխատանքով: Այսօրվա գների պայմաններում ուսուցչի աշխատավարձը չնչին է: Եթե հաշվի առնենք, որ դպրոցում աշխատող ուսուցիչը կամ դասախոսը չի կարող զբաղվել որեւէ այլ աշխատանքով, ապա ուսուցիչն իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար կամ պետք է հեռանա ոլորտից, կամ պետք է լրացուցիչ աշխատի տանը՝ ոչ թե որպես կրկնուսույց, այլ՝ որպես բարձրորակ ուսուցիչ եւ մանկավարժ ամենախորն իմաստով: Այսօր մեզանում, կարելի է ասել, ուղղակի թե անուղղակի կայացել է կրկնուսույցների՝ մեր լավագույն մանկավարժների մասնավոր դպրոցը, որ լրացնում է հանրակրթության բոլոր թերի ու բաց կողմերը: Այն ամբողջովին լցնում է այն անջրպետը, որը գոյացել է բուհական կրթության պահանջների եւ հանրակրթության ապահոված կրթական մակարդակի միջեւ: Այդ դպրոցի շնորհիվ ուսուցիչը կարողանում է գոյատեւել արժանապատվորեն եւ ծառայել հանրակրթությանն ու հայրենիքին: Ես խիստ կասկածում եմ այն մարդկանց հայրենասիրության վրա, ովքեր, կրկնուսույց պիտակը կպցնելով կայացած հայ ուսուցչին, փորձում են արատավորել նրա հայրենանվեր եւ հայանպաստ գործունեությունը: Ախր այսօր հայոց դպրոցը՝ հանրակրթությունը տնքում է չլուծված պրոբլեմների տակ: Բոլոր առարկաների ծրագրերն անհարկի եւ անիմաստ ուռճացված եւ ծանրացված են: Ոչ մի չափով հաշվի չի առնվում, թե տվյալ տարիքի միջին ունակություններով աշակերտն ի վիճակի՞ է կրել այդպիսի ծանրաբեռնվածություն: Կոնկրետացված չեն հանրակրթության ուսուցման կոնկրետ նպատակները՝ որպես պետականորեն հիմնական օջախ: Ոչ մի ձեւով հնարավոր չէ իմաստավորել 12-րդ դասարանը ներմուծելը:



Այս բոլոր խրթին պրոբլեմները, դասագրքերի ոչ հայեցի լեզուն ու խրթնաբանությունները ջարդվում են մեր հայրենիքի ապագայի հիմնական պատասխանատուի՝ խեղճ ու կրակ հայ ուսուցչի գլխին: Մասնավորապես, եթե ֆիզիկա եւ մաթեմատիկա առարկաներին կատարելապես չես տիրապետում, եղած դասագրքով չես կարող ըմբռնել-սովորել այդ առարկաները: Ոչ մի գերազանցիկ աշակերտ ի վիճակի չէ վերարտադրել այդ դասագրքերի գիտական, ակադեմիական լեզուն: Արդյունքում աշակերտների մոտ առաջանում է այս առարկաների նկատմամբ անհաղթահարելիության կոմպլեքս, եւ մենք կորցնում ենք աշակերտների մի ստվար մասին, որ պետք է ուսումը շարունակեր տեխնիկական բուհերում: Առանց տեխնիկական մտավորականության ես չեմ պատկերացնում մեր հայրենիքի ապագան:

Իսկ ի՞նչ պետք է անել: Ի սեր Աստծո, փոքրացրեք փոփոխելու արագությունը, որպեսզի ուսուցիչը հասցնի լուծել նոր առաջացող օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պրոբլեմները: Հակառակ պարագայում, Աստված մի արասցե, արագության գերազանցումը կհանգեցնի վթարի եւ անդառնալի կորստի:

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ֆիզմաթ գիտությունների դոկտոր

Առավոտ
aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 10.04.2012

VIVAcell MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# «Շիրակը» հաջող է մեկնարկել

## Իսկ «Արարատը», կարծես, հին երգն է երգում



Ուլիս Իմպուլս հանդիպում:

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունում կայացան երրորդ տուրի հանդիպումները:

Խաղադաշտերը պատրաստ չլինելու պատճառով ՀՖՖ-ի որոշմամբ 1-ին տուրի հանդիպումները հետաձգվել էին, ուստի թիմերը պայքարի մեջ ներգրավվեցին երկրորդ տուրից:

Մրցաշրջան-2013-ում հաջող են մեկնարկել հանրապետության բազմակի գավաթակիր «Միկան» եւ Հայաստանի բազմակի չեմպիոն «Շիրակը», որոնք անցկացրած երկու հանդիպումներում էլ պարտության են մատնել մրցակիցներին ու ստանձնել են արդեն կազմված մրցաշարային աղյուսակի առաջատարների պարտականությունները:

Առաջնությունը դեռ նոր է մեկնարկել, ու մարաթոնյան մրցավազքի ընթացքում թիմերի դասավորությունը, համոզված ենք, դեռ բազում անգամներ կփոխվի: Սակայն որքան էլ չենք ցանկանում, բայց հարկադրված ենք մտածել, որ «Արարատը» այս տարի էլ հին երգն է երգելու: Տա Աստված, որ մեր դատողությունները սխալ դուրս գան: Բայց մեկնարկային երկու հանդիպումներում կրած պարտությունները, որոնք մրցաշրջանի նախապատրաստությանն ակումբի ղեկավարության անլուրջ վերաբերմունքի արդեն իսկ առաջին դրսեւորումներն են, նորից մտահոգվելու տեղիք են տալիս: Անցկացրած երկու խաղերում էլ պարզորոշ զգացվում է, որ թիմը համալրած ֆուտբոլիստները բարձր տեղերի համար պայքարելու ներուժ ունեն: Սակայն դա նրանց էլի չի հաջողվիԾ ակումբի սեփականատիրոջ մեղքով: Բայց եկեք ժամանակից առաջ չանցնենք եւ սպասենք:

Երկու տուրից հետո մրցաշարային աղյուսակը գլխավորում են միայն հաղթանակներ տարած «Միկան» եւ «Շիրակը», իսկ մյուս թիմերը դասավորվել են հետեւյալ հաջորդականությամբ:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Միկա | 2 | 2 | 0 | 0 | 5-1 | 6 |
| 2. | Շիրակ | 2 | 2 | 0 | 0 | 4-2 | 6 |
| 3. | Գանձասար | 2 | 1 | 1 | 0 | 2-0 | 4 |
| 4. | Իմպուլս | 2 | 1 | 0 | 1 | 4-3 | 3 |
| 5. | Ուլիս | 2 | 0 | 1 | 1 | 0-1 | 1 |
| 6. | Փյունիկ | 2 | 0 | 0 | 1 | 2-4 | 1 |
| 7. | Բանանց | 2 | 0 | 1 | 1 | 1-4 | 1 |
| 8. | Արարատ | 2 | 0 | 0 | 2 | 1-5 | 0 |

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Կումայրի արգելոցը «մեռնում» է





Գյումրի քաղաքի միջուկը՝ Կումայրին, համարվում է աշխարհի 100 անհետացող թանգարան-արգելոցներից մեկը: 1800-ականներից ժառանգություն մնացած 1000-ից ավելի կառույցներ (լուսանկարում) ամփոփում ու ամբողջացնում են Կումայրի արգելոց- թանգարանը: Այն իր բացառիկ կոլորիտային շինություններով՝ քաղաք է քաղաքի մեջ: Բազմաթիվ ծրագրեր են եղել, թե ինչպես փրկել կառույցները ոչնչացումից, սակայն գործնականում որեւէ ծրագիր չի իրականացվել: Լավագույն դեպքում այն տները, որոնք դեռ բնակիչ ունեն, ներքին կոսմետիկ նորոգման են ենթարկվել, մյուսները օրեցօր ավելի վթարային են դառնում: Ի դեպ, Կումայրի արգելոցի կառույցների մեծ մասը ընդգրկված չէ Գյումրիի վթարային կառույցների ցանկում: Նրանք համարվում են առանձին միավոր, եւ վերանորոգում կատարելը նշված կառույցներում շատ դեպքերում արգելված է: Այսօր էլ՝ չնայած Կումայրի արգելոցի շատ կառույցներ վթարային են ու կանգնած են ոչնչացման եզրին, շարունակում են հայկական ֆիլմեր նկարահանել: Այստեղ հին հայկական կոլորիտը, ի պատիվ գյումրեցիների, պահպանված է: Կումայրի արգելոցի բնակարաններից մեկը պատկանում է գյումրեցի Շողիկ Միքայելյանի պապին, այն ավելի քան 120 տարվա կառույց է, երկար ժամանակ չի վերանորոգվել: «Կումայրի արգելոցի կառույցներում վերանորոգում կատարելն անթույլատրելի է»,- մեզ հետ զրույցում ասաց տիկին Շողիկը: Նրա խոսքերով, փոխել են աստիճանավանդակը, պատուհանները, բայց, օրինակ, դռներին, առաստաղին աշխատել են ձեռք չտալ՝ հին քաղաքի շունչը պահպանելու համար: Ժամանակի ընթացքում տների մեծ մասը դատարկվել է, քանի որ բնակիչներին արգելվում էր վերանորոգում կատարել, իսկ կառավարական մակարդակով ոչինչ չի արվել: Տիկին Միքայելյանի բնակարանի հարեւանությամբ կա եւս մեկ շինություն, որի մի հատվածն ամբողջությամբ քանդված է՝ ժամանակին եղել է 22 սենյականոց բնակարան: Այն ձեռք է բերել Աստղիկ Վենետիկյանի մորական պապը՝ 1917թ.-ին: Տանն ապրել են գերդաստանով՝ 4-5 ընտանիք: Տունը 5 մուտք ունի: Ավելի քան 25 մարդ է բնակվել, հիմա 22 սենյականոց տան մեկ սենյակում 70-ամյա Աստղիկ Վենետիկյանն է բնակվում: Նա ասաց, որ ամեն ինչ պահպանել է: Տիկին Աստղիկի երազանքն է, որ այս բնակարանը դառնա թանգարան: Կարող է նաեւ որպես հյուրանոց ծառայել, ճաշարան ունի, լավ պահպանված 2 թոնիր: Հարեւանությամբ էլի շատ բնակարաններ կան, որոնց տերերը վաղուց հեռացել են, տիկին Աստղիկն էլ պատրաստվում է գնալ Երեւան՝ քրոջ որդու մոտ բնակվելու: Այսպես շարունակվելու դեպքում՝ նրա բազմասենյականոց բնակարանի դուռը շատերի պես կփակվի:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## Հիմա հղի՞ էր, թե՞ ոչ՝ Բիյոնսեն



Վերջերս Բիյոնսեի մասին պտտվող լուրերը երկրպագուների շրջանում իրարանցում են առաջացրել: loveradio.ru-ի փոխանցմամբ՝ շոկային ճշմարտությունն արդեն հայտնի է: Շատ էր խոսվում այն մասին, որ ամերիկացի փոփաստղ Բիյոնսեն հղի չի եղել, եւ նրա փոքրիկին փոխնակ մայրն է լույս աշխարհ բերել:

Լրատվամիջոցներն այժմ նոր լուր են շրջանառության մեջ դրել՝ Բիյոնսեն ոչ մի երեխա էլ չունի, ոչ իր, ոչ էլ փոխնակ մոր կողմից ծնված: Իսկ այն աղջիկը, ում աստղը իր հետ ամենուր տանում է՝ երկար ու նորաձեւ ծածկոցներով փաթաթված, ոչ թե երեխա է, այլ բնականին շատ մոտ տիկնիկ: Ըստ չար լեզուների, այդպիսի տիկնիկները միայն հատուկ պատվերների դեպքում են պատրաստվում ու մարդուց համարյա չեն տարբերվում: Նույնիսկ նրանց մաշկը կարծես նորածին փոքրիկի մաշկ լինի: Եվ քանի որ նման տիկնիկն արժե 2-5 հազար դոլար, ապա այն կարող են իրենց թույլ տալ գնել միայն աստղերը:

## Լայն հագուստը՝ ընկճախտի պատճառ

Անգլիացի հետազոտողները հայտնում են, որ մարդու մարմնի չափսերին չհամապատասխանող, մեծ հագուստը կարող է դառնալ դեպրեսիայի պատճառ: Մասնագետների անցկացրած հարցումներից պարզվել է, որ յուրաքանչյուր երրորդ անհատ իրեն շատ վատ է զգում այն դեպքում, երբ հատկապես ջինսը, պիջակը եւ ամենօրյա հագուստն իրենց չափսերից մեկ կամ մի քանի անգամ մեծ են լինում: Բացի այդ, մասնագետները նշում են, որ հագուստի չափսերից բացի, տրամադրության վրա ազդում է գույնը:

Նշվում է, որ, օրինակ, երջանիկ մարդը հիմնականում ընտրում է վառ գույների հագուստ, գեղեցիկ, թանկարժեք զարդեր: Իսկ նա, ով տառապում է ընկճախտով՝ իր համար միեւնույն է, թե ինչ է հագել, ինչ գույների մեջ է. ավելի հաճախ տխուր եւ անտրամադիր մարդը ձգտում է «թաքնվել» մուգ գույների մեջ, կարծելով, որ այդ կերպ իրեն չեն նկատի:

Ե. Հ.

## Ստեղծվել է ռոքի կենտրոն



«Նաիրի» ռոք խմբի գեղարվեստական ղեկավար Արտաշ Դարբինյանը:

Հայաստանում վերջերս ստեղծվել է ռոքի դասավանդման կենտրոն: Այն հետաքրքրել է հատկապես այն երիտասարդներին, որոնք կիթառին տիրապետելու համար ստիպված պետք է սերտեին դասական երաժշտության բարդ համակարգը:

Այժմ նրանց հնարավորություն ընձեռվեց սովորել բոլորի կողից սիրված դասական ռոք ստեղծագործությունները՝ մատչելի եւ բնօրինակային տարբերակներով: Կենտրոնը գտնվում է Ղազարոս Սարյանի անվան թիվ 1 արվեստի դպրոցում: Ռոքի տարածման այս նոր ծրագրի հեղինակը ռոք-երաժիշտ, «Նաիրի» ռոք խմբի գեղարվեստական ղեկավար Արտաշ Դարբինյանն է: Նրանից հետաքրքրվեցինք, թե ինչը ստիպեց ստեղծել ռոքի կենտրոն: «Նախ ժամանակն է ռոքին մոտենալ դասական սկզբունքներով՝ ուսումնական համակարգին տալով նոր շունչ, երկրորդ՝ ռոքը ոչնչով չի զիջում դասական երաժշտությանը, բացի դրանից, մեր երկրում ռոքի աշխարհընկալումը պետք է ընդլայնվի ու դրական հետեւանքներ ունենա թե՛ երիտասարդների ճաշակի, թե՛ առհասարակ մշակութային զարգացման վրա: Քաղաքակիրթ երկրներում գոյություն ունեն նմանատիպ ուսուցողական կենտրոններ, օրինակ՝ Berkley-ը՝ Բոստոնում, Guitar College-ը՝ Մոսկվայում եւ այլն: Մենք էլ որոշեցինք չզիջել ուրիշներին»,- պատասխանեց երաժիշտը: Արդյո՞ք շատերի երաժշտական ճաշակը կհամապատասխանի իր ծրագրերի իրագործմանը:

«Մենք լավատես ենք, քանի որ հայ երիտասարդների շրջանում իրոք լուրջ հետաքրքրություն կա ռոքի հանդեպ: Չեմ կասկածում, թե մեզնից դուրս կգան հիանալի ռոք երաժիշտներ»,- ասաց մեր զրուցակիցը: Մեր հաջորդ հարցին էլ՝ այսօրվա էստրադան կարիք ունի՞ ռոք երաժիշտների, Արտաշ Դարբինյանը պատասխանեց. «Քանի որ մեր մոտեցումը լինելու է պրոֆեսիոնալ՝ հիմնված դասական սկզբունքների վրա, կարելի է ասել, որ մեր կենտրոնի սաները լինելու են ունիվերսալ երաժիշտներ: Ռոքի շնորհիվ երաժիշտը ստանում է ազատ մտածելակերպ, դասական հիմք եւ սովորում տիրապետել այն ամենին, որոնք մեծ պահանջարկ ունենեն թե էստրադայի, թե ջազի, թե դասական երաժշտության ասպարեզներում»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՍԱՅԱՆ